

ՏԵՂԵԿԱԳԻՐ**ՏԵՂԵԿԱԳԻՐ****ՊԱՏԱՆԱՏԵՂԻ ՔԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻ
ՄՈՒՏՔԻ ՎԱՅՐԵՐՈՒ ՊԵՂՈՒՄՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ
(Յունուար, Փետրուար, Մարտ, 2024)**

Վերջի երեք ամիսներուն, Ս. Յարութեան Տաճարի յատակի նորոգութեան աշխատանքները կեդրոնացած են Պատանատեղի Օծման Քարի բաժնի եւ Տաճարի մուտքին արեւելեան կէսին վրայ, այսպիսով դէպի Տաճար մուտքն ու ելքը կիսով չափ բաց էր:

Տաճարի դրան մուտքի եւ Պատանատեղի բաժնի պեղումներուն խորութիւնը եղաւ մօտ չորս մետր: Պատանատեղի Հիւսիսային կողմը ի յայտ եկաւ II դարու կիսուն Ատրիանոս Կայսեր կողմէ կառուցուած մեհեանի պատին մէկ մասը: Մեհեանի այս պատին շարունակութեան մէկ այլ մասը ի յայտ եկաւ Գերեզմանի հարաւ-արեւելեան բաժնին մէջ, իսկ Տաճարի մուտքի բաժնին մէջ՝ Յորդանանեան շրջանէն դրուած աղտոտ ջրատար խողովակ մը, որ ի վերջոյ պէտք է նորով փոխարինել: Այստեղ միջանկեալ ըսենք, որ 1980 թուի սկզբնական տարիներուն, երբ Ս. Յարութեան Տաճարին մէջ նորոգութիւններ կը կատարուէին, պեղում կատարեցինք մեր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ աւագ խորանին ետեւը գտնուող պատին միւս կողմը. հանգուցեալ Կիրեղ Եպիսկոպոս Գաբրիէանի հսկողութեամբ, այնտեղ յայտնուած սենեակին մէջ, որ ներկայիս կը կոչուի Ս. Վարդան մատուռ. ի յայտ եկաւ նաեւ Ատրիանոսի կառուցած նոյն մեհեանի պատին մէկ այլ մասը:

Պատանատեղի եւ դրան միջեւ կայ մէկ պատուանդանի վրայ նստած երկսիւն մը, որ կը կրէ մեր Վերնատան (Երկրորդ Դողգոթայի) կամարը: Պեղումը ցոյց տուաւ, որ այդ պատուանդանին խարիսխը բաւականին բարակ եւ տկար էր. ուստի երկաթներով ամրացուցին մինչեւ մօտակայ պեղումներուն լրանալը, որմէ ետք, ներկայիս, խոր իջնող երկաթներով եւ սիմէնթով ամրացուցին զայն:

Հարկաւոր էր Պատանատեղի Քարը տեղէն հանել, իմանալու թէ անոր տակը ինչ կայ: Ըստ ներկայ *status quo*-ի տուեալներուն, անցեալին այդ Քարը զետեղուած էր Տաճարի արտաքին գաւիթին մէջ, որ յետոյ ապահովութեան համար ներս բերուած է: Այդ Քարին տակը պեղելով յատուկ բան մը չգտնուեցաւ, բացի հռոմէական շրջանէն ճամբու մը (?) մասը: Պատանատեղի Քարը մաքրուեցաւ եւ ենթարկուեցաւ յատուկ նիւթերով խնամքի եւ պահպանութեան: Երբ այլեւս տեղը պատրաստ էր Քարը վերադարձնելու իր վիճակին, առաջարկեցի ընդհանուր պեղումներու աշխատանքներուն հսկող Ֆրանսիսքեան Հայր Տոպրոմիրին, որ Պատանատեղի Քարը բարձրացուի 20 սմ՝ դիւրացնելու համար մարդոց խոնարհումը անոր: Առաջարկը տրամաբանական գտնելով, Մարտ 19-ին, կէսօրէ ետք ժամը 5-ին ժողովական հանդիպում ունեցանք տեսուչներով եւ անմիջական Հայոց, Յունաց եւ Ֆրանսիսքեան գլխաւոր ճարտարապետներով եւ ի ներկայութեան Տրց. Գեղամին եւ Ֆրանսիսքեան Հայր Աթանասին: Ժողովականներ համաձայն գտնուեցան եւ բաւարար նկատեցին որ Պատանատեղի Քարը բարձրացուի միայն 15 սմ: Այս որոշման առընթեր, թելադրուեցաւ որ պատրաստուի այս փոփոխու-

Թեան գծագրութիւնը եւ միաժամանակ, պատրաստել համաձայնագիր մը երեք գլխաւոր յարանուանութեանց կողմէ ստորագրելու համար: Այս որոշումը ըլլալով հիմնական փոփոխութիւն, անհրաժեշտ էր նաեւ համաձայնութիւնը ունենալ իրաւատէր երեք հոգեւոր պետերուն: Ժողովէն անմիջապէս ետք խօսեցայ մեր Պատրիարք Սրբազան Հօր հետ եւ յայտնեցի մեր ունեցած ժողովի մասին: Պատրիարք Սրբազան Հայրը տուաւ իր համաձայնութիւնը, յուսալով որ միւս երկու պետերը եւս կը համաձայնին այս կատարուելիք փոփոխութեան: Այս տեղեկագրի պատրաստութեան ժամանակ արդէն իմացանք որ միւս երկու պետերը եւս համաձայն են այդ կատարուելիք փոփոխութեան:

ՍԱՄՈՒԷԼ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԱՂՈՅԵԱՆ

Տեսուչ Սուրբ Յարութեան Տաճարի



Յորդանանի ժամանակէն մնացած խողովակ
Պատանատեղի հիսիսը



Յորդանանեան հին խողովակը փոխարինուած
ժամանակաւոր ղողովակով



Յորդանանի ժամանակէն խողովակ Ս. Յարութեան
Տանարի դրան մօտ



Բ. դարու Ատրիանոսի մենեանին պատը



Փորձած երկսիւնի կողքը



Այն երկսիւնը որ կը կրէ մեր երկրորդ Գողգոթայի
կամարը



Դրան եւ երկսիւնի միջեւ



Սիւննք՝ ամրացնելու երկսիւնը



Պատանատեղի Բարը կը պատրաստուի փոխադրուելու



Պատանատեղի վայրը



Պատանատեղի ֆարին նոր պատռանդանը



Պատռանդանը կ'իջեցուի իր նախկին տեղը



Պատանատեղի ֆարը իր մաքրումը ներկայ վիճակով



Պատանատեղի ֆարը



Պատանատեղի պատուանդանի շուրջի ֆարի մաքրում



Պատանատեղի ֆարը կ'իջեցուի իր պատուանդանին



Այցելութիւն պեղումներու վայր Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք.
Ղարիպեանի եւ Միաբանութեան անդամներու կողմէ



Պատանատեղի ֆարի փոխադրում մաֆրման վայր



Պատանատեղի ֆարի մաֆրման աշխատանքներ



Պատանատեղի ֆաբի փոխադրում մաքրման վայր



Պատանատեղն իր վերջնական վիճակին մեջ